# ՆՈՐ-ԴԱՐ

№ 115 ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շորեքշաբթի 8 Օգոստոսի 1890 Շորեքշաբթի 8 Օգոստոսի ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 115

Տարին՝ 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, 3 ամիսը՝ երեք բ 50 կ., ամիսը՝ 1 բ., հատով 5 կոպեկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրութիւնը Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամանակ։
Յայտարարութիւնների բաւին 2 կ., երկրամասերի համար կրկնապատիկ


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Հետագիրներ։

Քրանիկոն.—Լուրեր։ Ուրդ քեզ օղնիր Աստուած էլ կ'օգնի.—Նամակներ ճանապարհից։

Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

Բանասիրական.—Զուարթ երեկոյ։

Տեղական։

Յայտարարութիւններ։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՐԵԻԼ, 5 օգոստոսի.—Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչն առաւօտեան ժամը 6 և 20 րոպէին տեղս ժամանեց արտակարգ գնացքով, որ բաղկացած էր Մօսկուա-Կուրսկի երկաթուղու արքայական 15 վագոններից և, վարչական անձերի ընդունելութիւնից յետոյ, կայարանում վագոնի մէջ մնաց։ Առաւօտեան ժամը 10½-ին Նորին Բարձրութիւնը պրուսական օտնային նշանագնեստով, Սև Արծուի ժապաւէնով, Բևէլի նաւամատոյցի վրայ նոր շինած Հարթարակը գնաց գերմանական կայսրին դիմաւորելու համար։ Այստեղ կանգնած էր Վիլհելմ կայսրի անուան Վլբօրգի գնդի վաշտը դրօշակով և երաժշտական խմբով և հաւաքուած էին նահանգական զինուորական և քաղաքացիական ատիճանաւորները և գերմանական դեսպանութեան անդամները, գլուխ ունենալով գեներալ Շուէյնիցին։ Առաւօտեան ժամը 11½-ին թնդանօթներն և խարիսխատեղերում կանգնացրած մարտանաւերի նաւաստիներն աւետացին, որ Վիլհելմ կայսրը, ծովի վրայ փոխծովապետի և Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովչի ընդունելութիւնից յետոյ, «Hogenzollern» նաւից ափ դուրս եկաւ։ Կայսրը Վլբօրգի գնդի նշանագնեստ ուներ Անդրէևսկայա ժապաւէնով։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովչի հետ գրկախառնուելով, կայսրն ընդունեց պատուաւոր ծանուցագիրը, որի միջոցին երաժշտական խումբը գերմանական ազգային հիմն էր նուագում, դիտեց պատուաւոր պահնորդների խումբը և ողջունեց զինուորներին, կանչելով «ողջոյն Վլբօրգցիներ». պատուաւոր պահնորդների խումբը պատասխանեց «ուռա»։ Մեծ Իշխանի հետևորդների խմբի անդամներին ողջունելով, կայսրը Վլբօրգեան գնդի սպաներից հայց ու աղ ընդունեց։ Դրանից յետոյ վաշտն անցաւ կայսրի առաջով։ Կայսրին շրջապատել էին պրուսական պրինց Հէնրիխը, Սաքսէն-Ալտենբերգեան պրինցը, կանցլեր գէ Կապրիվին և հետևորդները։ Մեծ Իշխանի հետ վագօն մտնելով, կայսրն երկաթուղու կայարանն ուղևորուեց, որտեղ, 20 րոպէից յետոյ, նոցին Բարձրութիւնների հետ տեղափոխուեց Մօսկուա-Կուրսկի երկաթուղու արքայական գնացքը։ Կէսօրուայ ժամը 2½-ին գնացքը դէպի Նարվա ուղևորուեց։ Ամբողջ քաղաքն և արքայական գնացքի ճանապարհը զարդարուած էին դրօշակներով. ճանապարհի վրայ բազմաթիւ ժողովուրդ էր կանգնած։

ՆԱՐՎԱ, 6 օգոստոսի. — Երէկ Բարձրագոյն ներկայութեամբ Կրէնհօլմի մանուֆակտուրային դործարանատէրերի ծախքով յունադաւան էստերի համար կառուցուելիք Քրիստոսի Յարութեան և Հունգերբուրգում Մեծ Իշխան ս. Վլադիմիրի անուան եկեղեցիների հիմքը դրուեց։

Երեկոյեան ժամը 7-ին զօրքերը կանգնած էին Պօլովցևի Հարթարակի մօտ։ Հարթարակի վրայ կանգնած էր Պրէօբրաժէնսկի գընդի վաշտը պատուաւոր պահնորդների խմբի հետ և երաժշտական խմբերով. հաւաքուած էին զինուորական և քաղաքական վարչական անձերը, քաղաքագիտական կօրպուսի անդամներն և գերմանական սպաները. այնուհետև ժամանեցին կայսերական տան անդամները։ Թագաւոր Կայսրը պրուսական գրենադէրների Կայսր Ալէքսանդրի անուան գնդի նշանագնեստ ուներ Սև Արծուի ժապաւէնով։ Հանդիպելիս թագաւորները գրկախառնուեցին։ Գերմանական Կայսրը դիտեց պատուաւոր պահնորդների խումբն և ողջունեց նրանց ռուսերէն. այնուհետև Թագաւորները բաց կառքով Պօլովցևի տուն ուղևորուեցին. ընդունելութեան. համար հաւաքուած բոլոր բնակիչները ցնծագին «ուռա» էին կանչում։

## ՔՐՈՆԻԿՈՆ

Յուլիսի 31-ին մայրաքաղաքի թերթերն Իգդիրից հեռագրում են, որ Ալաշկերտի դաշտում հայերի և քիւրդերի միջև տարաձայնութիւններ են տեղի ունեցել և քիւրդերը մեծ վնասներ են կրել։ Հայերից մի քանի մարդ են մեռած և վիրաւորած։ Պարզեալ թուրական զօրքեր են ուղարկուած Բայազէդ, և քիւրդ բէյերին հրամայուած է դարս դալ իրենց բոլոր զօրքերով։

—

Հայերէն գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութիւնից ստացանք իր նոր, № 27 հրատարակութիւնը—«Ուղեցոյց գործնական չերամապահութեան» գրքոյկը։ Գրեց Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարեանց։ Հարկաւոր ենք համարում արտադրել այստեղ հեղինակի փոքրիկ յառաջաբանը իր այդ կարևոր ձեռնարկի մասին. «Մի քանի տարի առաջ պարբերաբար մի չարք յօդուածներ տպելիք չերամապահութեան մասին և խոստացանք մի օր լրացնել նրանց թերին և լոյս տանել առանձին գրքոյկով։ Այսօր բաղդատար ենք, որ՝ իրականացած ենք անում մեր խոստումը և կարող ենք ձեռնարկիս միջոցով մի փոքր ծառայութիւն անել մեր չերամապահներին։ Այս ձեռնարկը կազմելիս բացի մեր չորս տարեկան դիտողութիւններից, մենք օգտուել ենք նաև Ֆրանսիացի մեծ վարպետ Քիւնոյի աշխատութիւնից։ Ֆրանսիայի մէջ չերամապահութիւնը գտնւում է մեծ յառաջադիմութեան վրայ։ Ամեն տարի այնտեղ հրատարակւում են նոր գրքեր և տետրակներ չերամապահութեան վերաբերեալ։ Ֆրանսիայի կառավարութիւնը ամեն տարի մեծ գումարներ է յատկացնում չերամապահութեան ծաղկեցնելու համար։ Ֆրանսիայի մէջ կան մեծ չերամապահական դպրոցներ, ուր ուսանում են ոչ միայն տղաներ, այլև աղջիկներ։ Ֆրանսիայի կառավարութիւնը ամեն տարի ուղարկում է իր պաշտօնեաներին, որ ուսումնասիրեն չերամապահութիւնը Ասիայի մէջ։ Ամեն տարի Ֆրանսիայի կառավարութիւնը ուղարկում է Ասիա Պաստէօրի ինստիտուտի երիտասարդ գիտնական

— Ես ինձ համար չեմ խնդրում, ես ուզում եմ, որ ինձ հետ ամեն ինչ լավ լինի, որ ես ոչ մի վատ բան չանեմ, որ ինձ հետ ոչ մի վատ բան չպատահի, որ ես ոչ մի մեղք չգործեմ

# ՑԱՎԱԾՈՂՆԵՐ ՀՈՂԱՀԱՆՈՂՆԵՐ

Ա. ԱՄՈՍՈՎԻ

«Դանիել Ալիշանի կյանքի և գործունեության մասին» գրքի հեղինակ

Ա

Ալիշանի ծննդյան 100-ամյակի առթիվ Վենետիկի Մխիթարյան միաբանությունը հրատարակեց «Ալիշան» հատորը, որ ընդգրկում է նրա կյանքի և գործունեության մասին հոդվածներ, ինչպես նաև նրա նամակները։ Հատորի հեղինակներից մեկը՝ Ա. Ամոսովը, գրում է. «Ալիշանի կյանքի և գործունեության մասին մենք ունենք մի շարք հոդվածներ, որոնք գրված են տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների կողմից։ Այդ հոդվածները, սակայն, չեն կարող մեզ տալ Ալիշանի կյանքի և գործունեության ամբողջական պատկերը։ Ալիշանի կյանքի և գործունեության ամբողջական պատկերը մենք կարող ենք տալ միայն նրա նամակների հրատարակությունից հետո։ Ալիշանի նամակները մեզ կտան նրա կյանքի և գործունեության ամենաճշգրիտ պատկերը

չիւր տնից մի փոքր ծախս է պահանջամ միայն, թէև պարոնը պատրաստ է իր կարողութեան չափ նպաստել նաև այդ գործին։

(Կը շարունակուի)

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Ի. Բիսմարկի կողմնակիցներն եռանդուն կերպով աշխատում են պարլամենտական մի նոր կուսակցութիւն կազմակերպելու, որ «Ազգային դաշնակցութիւն» (National Yereinigung) պէտք է կոչուի։ Այդ նոր կուսակցութեան կազմակերպողներն իրենց հրաւէրի մէջ, որ այս օրերս պէտք է հրատարակուի, յայտնում են, թէ արդեօք գերմանական ներկայ կուսակցութիւնը պատերազմ կամ նեղութիւն մի օրում է, մեծ չարժում լինելու դէպքում կարող է, ունի միջոցներ աջողութիւն ունենալու համար։ Եւ այդ հարցին բացասական պատասխան են տալիս։ Այդ նոր կուսակցութեան ընդդիմադրութեան բնաւորութիւնն այն տեղն է հանում, որ հրաւէրի մէջ մինչև անգամ համեմատութիւն է տրւում Գերմանիայի ներկայ և 1815 թուի պայմանների միջև։ Նոր կուսակցութիւնը միանում են նաև այսպէս կոչուած «զաղթական ազատրուողները», որովհետև կառավարութիւնը և մանաւանդ Կայսրիվին նրանց աչքում «կործանում են երկիրը, պրկելով նրան զազթավայրեր ձեռք բերելու կարողութիւնից», իսկ Գերմանիան առանց նոր գաղթավայրերի կարող չէ հօլա գնալ, որովհետև ժողովուրդն արագ բազմանում է։

— Հարաւային Գերմանիայի երկրագործական ընկերութիւնները բայխատային առաջարկելու համար մի խնդրագիր են պատրաստում վաչխառութեան վերաբերմամբ ներկայ օրէնքը փոփոխելու և լրացնելու մասին։ 10 տարի է արդէն, որ Գերմանիայում վաչխառութեան դէմ քրէական մի օրէնք կայ, որով վաչխառութեամբ պարապողներն երկարատև բանտարկութեան են ենթարկուում։ Անկասկած է, որ այդ օրէնքն արդէն բաւերար նպատակին է ծառայել, բայց և այնպէս խնդրագրի մէջ պահանջւում է, որ վաչխառն բացի քրէական պատասխանատուութեան ենթարկուելուց, քաղաքացիական պատասխանատուութեան էլ ենթարկուի։

ԱՆԳԼԻԱ.—Յունիսի 25-ին Լօնդոնի լորդ-մէրի պալատում մխիթարութեան անդամների համար սովորական ընդունէլ էր պատրաստուած, որի ժամանակ լորդ Սալիսբիրին, պատասխանելով Թադուհու մխիթարների կենացին, մի ճառ խօսեց, որ գլխաւորապէս նուիրուած էր ներկայ քաղաքականութեան նշանաւոր խնդիրներին։ Յիշեցնելով, որ վերջին հինգ տարուայ ընթացքում այդ 6-րդ անգամն է, որ լորդը այդպիսի բանկէտների ժամանակ պատասխանում է այդպիսի կենացներին, Սալիսբիրին նկատեց, որ այդպիսի դէպքերում մխիթարութեան ներկայացուցիչը պարտաւոր է չօշափել քաղաքական օրուայ խնդիրները։ «Բայց ես ստիպուած եմ խոստովանուել,—ասաց նա,—որ վերջին հինգ տարուայ ընթացքում աշխարհը երբէք այն հետաքրքիր տեսարանը չէ ներկայացրել, ինչպէս ներկայումս (յիշատ)։ Այդ տեսարանը նրա համար է հետաքրքիր, որ անպայման և կատարեալ խաղաղութեան բնաւորութիւն է կրում։ Եւրոպայում մի քանի կեդրոններ կան, որտեղից յուզումներ են ծագում. մենք լաւ ճանաչում ենք այդ կեդրոնները, բայց այժմ դրանցից ոչ մէկն էլ չէ գործում։ Շատ փոփոխութիւններ եղան, զանազան լուրեր հաղորդեցին իրար, մի ճգնաժամը փոխարինից միւսին, բայց և այնպէս վերջ ի վերջոյ պետերը օգտակար գտնելին խրատաբանչիւր յարմար առիթից և բոլոր ուժերը լարելին, որպէս զի ոչինչ չխանգարէ Եւրոպայի խաղաղութիւնը»։ «Շատ կարելի է,—ասաց ճառախօսը,—որ եւրոպական գործերի հենց այդ խաղաղ բնաւորութիւնն էր պատճառը, որ Եւրոպայում միջազգային քաղաքականութիւնը երկրորդ տեղն անցաւ և առաջին տեղը գաղթային խնդիրները բռնեցին։ Մենք Աֆրիկայով ենք զբաղուած և ուրիշ ոչնչով, ոչ թէ նրա համար, որ Աֆրիկան աւելի հետաքրքիր է, այլ նրա համար, որ Եւրոպան աւելի քիչ հետաքրքիր է դարձել»։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՅ

«Ջէքէրնէյն» ասէ նոյն։ Ձիկագոյում մի ինժեներական գրասենեակ (Չիկագո) մի փոքրիկ գործիք է հնարել, որ մեծ ծառայութիւն պիտի մատուցէ գրպանահատներին։ Այդ գործիքը ծխախոտի տուփի չափ է, որի մէջ այնքան էլեքտրականութիւն կայ, որ բաւական է ամէն ուզում է լինի մի սենեակում չվկայնել, գրա հետ գործ է ածւում նաև մետալական մի ձող, որ գալը հնչառութեամբ կարող է ձեռքում պահել և միացնել գործիքին հաղորդիչ ձողի միջոցով։ Բաւական է մետալական ձողով չօշափել մարմնի որ մասն ուզում է լինի և մարդ լսելոն աչքաթափ լինելով, կացնահարը նման գեամին կ'ընկնի։ Գրպանահատն այդ միջոցին կարող է հանել նրա ժամացոյցը (մեր երկրում նաև արծաթէ գօտին), փողերն և առհասարակ այն բոլորն, ինչ որ կը տեսնէ, որ ծանրութիւն են պատճառում ուրիշներին։

Աւազանէն 600-ամեայ։ Այս տարի լրանում է 600 տարին, ինչ որ գոյութիւն ունին ակնոցները Ուրեմն 600 տարի առաջ արդէն հարկաւորութիւն էին զգում տեսողութեան համար օգնութիւն կանչել ապակիներին։ Արդէն նէրծոր, կարճատես լինելով, յղկած ապակիներ էր գործ ածում գլադիատորների խաղերին նայելու համար, բայց մինչև XIII դարն այդ ապակիները գործ էին ածւում այժմեան մեծացնող ապակիների ձեւով։ Իսկ երկարակեաց ակնոցների գիւտը 1290 թուին են վերագրում։ XIV դարում ակնոցների արդէն գործածութեան մէջ մտան, բայց այն ժամանակ դրանք թամկոպին իրերի կարգն էին դասում։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### Երթևեկութիւն Թիֆլիս և Վլադիկաւկազ միջև մինչև Նոյեմբերի 1-ը։

Թիֆլիսից գնում են
Վլադիկաւկազից դուրս են գալիս

Հինգ հոգուտ ունեցող փակ կառքերը, առ. 7 ժամին. գիշերում է Դուշետը կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 5-ին հասնում է Վլադիկաւկազ։ Նոյնպէս Թիֆլիսից գնում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Մլխէթում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում է Վլադիկաւկազ։

Վեց հոգուտ ունեցող օմնիբուսները գնում են Հերեկոյեան ժամը 4-ին, և առանց գիշերելու կայարաններում, միւս օրը երեկ. ժամը 8-ին հասնում է Վլադիկաւկազ։ Երկրորդ անգամ դուրս է գալիս երեկ. ժամը 5-ին և նոյնպէս առանց գիշերելու միւս օրը երեկ. 8 ժամին հասնում է Վլադիկաւկազ։

Հինգ հոգուտ ունեցող փակ կառքերը առաւօտեան ժամը 7-ին գիշերում է, Գանձաուր կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Թիֆլիս։ Միւսը դուրս է գալիս առաւօտեան 9 ժամին, գիշերում է Մլխէթում և միւս օրը երեկոյեան 8 ժամին հասնում է Թիֆլիս։

Վեց հոգուտ ունեցող օմնիբուսը երեկոյեան ժամը 4-ին, գիշերը չէ կանգ առնում և միւս օրը երեկոյեան 7 ժամին հասնում է Թիֆլիս։ Միւսը դուրս է գալիս երեկոյեան 5 ժամին, առանց գիշերելու, միւս օրը երեկոյեան 5 ժամին 50 ր. հասնում է Թիֆլիս։

Հինգ հոգուտ ունեցող փակ կառքերը երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովօսախսկի վրայով։

Ե ր ք ա թ ի՝ օրերը՝ երեկոյեան 8 ժամին, չորքշաբթի գծով, բոլոր նաւահանգիստներով։

Ե ր կ ո ւ շ ա բ թ ի՝ երեկոյեան 7 ժ. աւտոտաքսմանեան գծով, դէպի Կ. Պոլիս

Թաթում գալիս են

Ե ր կ ո ւ շ ա բ թ ի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Կերչի և Սուխումի վրայով։

Հ ո ւ ք ր ք շ ա բ թ ի օրերը՝ առաւօտ, ուղիղ գծով, Կերչի և Նովօրօսսիյսկի վրայով։

Ո ւ ր բ ա թ օրերը՝ երեկոյեան, չրքշաբթի գծով։

Կ ի ր ա կ ի օրերը՝ առաւօտը Կ. Պոլսից։

Ծանուցանէ. Ուղիղ գծով եկող այն նաւերը, որոնք վերադարձին մանում են Սուխում և Նովօրօսսիյսկ, Նովօրօսսիյսկից դարս կը դան երեկոյեան ժամը -ին, որպէս զի Նովօրօսսիյսկի երկաթուղու գալուն յարմարին։

Փոթի գալիս են

Սուխումից՝ երեքշաբթի օրերը։
Բաթումից՝ հինգշաբթի, չորեքշաբթի, երկուշաբթի, երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Փոթիից գնում են

Բաթում՝ հինգշաբթի օրերը։
Սուխում՝ ուրբաթ օրերը։

### II Կասպից ծովի վրայ

Բագուից գնում են

Դերբենդ, Պետրովսկ և Աստրախան՝ չորեքշաբթի, ուրբաթ և չաբաթ օրերը, ցերեկը ժամը 1-ին։

Ա ք տ ա-Ա ղ ա՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5-ին։

Լ ե ն ք օ ր ա ն, Ա ս թ ա ր ա և Է ն զ ե լ՝ երկուշաբթի օրերը, ցերեկը ժամը 1-ին։

## ԵՒԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

### I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացքը Թիֆլիս գալիս է

Բաթումից, պօստ. 11 ժ. 8 ր. եր.
Բագուից, » 7 ժ. 40 ր. առ.
Բաթումից, մար. ապ. 8 ժ. — ր. առ.
Դանձակից, » 8 ժ. 20 ր. եր.

Գնացքը Թիֆլիսից գնում է

Բաթում, պօստային. 8 ժ. 40 ր. առ.
Բագու, » 12 ժ. 8 ր. գիշ.
Բաթում, մար. ապ. գն. 3 ժ. 10 ր. ց.
Գանձակ, » 9 ժ. 45 ր. առ.

### II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Աղայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ուզուն-Աղա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Աղայից գնացքը գնում է և գալս երեքշաբթի և չաբաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

### I Բօստով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Բօստով գալիս է 8 ժ. 48 ր. առ.
Բօստովից գնում է 7 ժ. 28 ր. ցեր.
Վլադիկաւկազ գալիս է 7 ժ. — ր. եր.

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գործարան.

Դրօշմ.

ՓՇԱՏԵՐԵԻ ԾԱՌԻ ԷԱ.

Բալասանի քաղցր հատ է տարածում

ՓՇԱՏԵՐԵԻԱՑԻՆ Ա.Ն.Տ.

ԵՂԵՒՆԻՈՅ ՍԱՊՈՆ

Ախտժելի հատով

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ

ՏԵԽՆՕ-ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱՅԻ

Գրասենեակը և պահեստները Պետերբուրգում, Ալէքսանդրինեան հրապարակ, № 7.

Վաճառւում են պետութեան ամենալաւ մեդալներով։

Կազմիքից դերձ մնալու համար խնդրում ենք ուշադրութիւն դարձնել վերը դրած կատարեալ ութիւնից հաստատած գործառնական գրոշմի վրայ։

Պիչյո-Կուրանները ուղարկւում են չրեքաբ։

(Պ. Կ. Օ. № 1614) 6—4

# ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագորնայա փողոց, № 9)

Յանկացողք ունենալ իրենց առևտրական գործերի համար, արդեալ լուսնիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատուած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

Ընդունելութիւնները սկսուելու են սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, Учредителю курсовъ С. П. Мануэльянцу.

(չոր.) 5—5

BATEAUXV VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-IE.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր նաւագնացութիւն Մարսէլլից Բաթում երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, սկսած չորեքշաբթի, ապրիլի 4/16-ից և Բաթումից Մարսէլլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս երկուշաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը, սկսած հինգշաբթի, 26 օգոստոսի 28 սեպտեմբեր։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հինգշաբթի | 16/28 | օգոստոսի | «Անատոլիա» | նաւապետ Գարրիգ |
| » | 30 օգոստոսի /11 սեպտեմբերի | » | «Սերկասի» | » Բօչէլ |
| » | 13/25 սեպտեմբերի | » | «Մինդրէլիա» | » Փիլոէն |
| » | 27 սեպտեմբերի /9 հոկտեմբերի | » | «Անատոլիա» | » Գարրիգ |

Տեղեկութիւնների համար բեռների և ճանապարհորդների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում պ. ԳԱՐԱՆԻՈՆԻՆ, Նաքերեժնայա, Թիֆլիսում՝ պ. Վիկտոր դ'Արնօին, Մէյդին փողոց, գեներ. Տէր Աստուածատուրեանի նախկին տունը։ 10—1

Լոյս տեսաւ
ՈՒՂԵՑՈՑ
ԴՈՐԾՆԱԿԱՆ
# ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ
Գրեց
ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
Գինն է 40 կոպէկ

Հրատարակութիւն Թիֆլիսի Հայերէն գրքեր հրատարակող ընկերութեան։

Կարելի է ստանալ Թիֆլիսի Հայ գրավաճառանոցներից։ 10—1

## ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՈՍԿԷ ՄԵԴԱԼ ՈՍԿԷ ՄԵԴԱԼ




ԹԻՖԼԻՍՈՒՄ

# Ն. Ի. ՌՈՋԱՐՋԵԱՆՑԻ

Առաջարկում եմ պ.պ. սիրողներին լաւ ծխախոտ և պապիրոս իմ գործարանից, ուր պահեստում կայ Թիւրքական և տեղական արդիւնաբերութեան գերազանց յատկութեան թարմ ծխախոտ։ Պատուէրները կատարւում են ճշդութեամբ և գործածողների ճաշակի համեմատ։ Մագազինում կայ ծխախոտ գործածելու ամենալաւ գործիքներ և նիւթեր։ Գործարանի գլխաւոր խանութը գտնւում է Վլօրցովայա փողոցում, ազնուականների հողային բանկի (նախկին Աբծրուճու) տանը։

X—15

Բնական պիտութիւնների գօկտոր Լերայի Ռուսիայում թոյլատրուած
# ԵՐԿԱԹԱ-ՖՕՐՍՖՕԱԹՈՒ ԱՂ
(FER DF LERAS)

Այս դեղը պարունակում է իւր մէջ հեղուկացրած երկաթ և ֆոսֆորաթթու աղ։ Սա երկաթից պատրաստած ամենալաւ միջոցներից մինն է. բժիշկները դրան տալիս են երեսի գունապոլենի և սակաւարիւնութեան դէմ և փոքրիկ աղջկերանց զարգացումը հեշտացնելու համար։

Գլխաւոր պահեստն է Ռուսիայի գլխաւոր դեղատներում։
(Մ.) 15—3

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Августа 1890 г. Կուկազ լրագրի գրասենեակի Տպարան Типографія конторы газеты Кавказъ, Гол.пр., д Читахова.